ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/146

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձը) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.10.2018թ. թիվ 26-3/[1261743]-18 գրությամբ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 01535537/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, նույն նախարարության համապատասխան ստորաբաժանման 08.10.2018թ. թիվ 18-3/[1260644]-18 գրության հիման վրա, 15.10.2018թ. նախաձեռնել է ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.10.2018թ. թիվ 18-3/[1260644]-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներից մեկի՝ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 01535537, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փող., 130 շենք, 2-րդ հարկ, էլ. հասցե՝ police02shabatatert@gmail.com) մոտ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի ա) ենթակետով նախատեսված հիմքերը՝ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը (սահմանված ժամկետում ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն չի ներկայացրել հրավերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի շտկված տարբերակը՝ դիմում-հայտարարությունը):»:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>««02» շաբաթաթերթ» ՓԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն 22.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կահույքի, մասնավորապես աթոռների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ /այսուհետ նաև՝ Աճուրդ/:

««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի համապատասխան աշխատակիցը՝ (համապատասխան հմտություններ ձեռք բերելու նպատակով) փորձարկել է www.eauction.armeps.am էլեկտրոնային համակարգը:

Ընկերությունը որպես գնային առաջարկ ներկայացրել է Աճուրդի նախահաշվային գնից հարյուրապատիկ ցածր՝ սիմվոլիկ գումար: Մասնավորապես, Ընկերությունը գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները. Գին՝ 1000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 200 ՀՀ դրամ և Առաջարկված գին՝ 1200 ՀՀ դրամ:

Սակայն ցանկանում ենք հայտնել, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող ընկերություն:

Ընկերությունը՝ Աճուրդի հրավերով նախատեսված թիվ 1 հավելվածի փոխարեն կցել է սույն գործին չվերաբերող սկանավորված փաստաթուղթ, որի ուսումնասիրությունից ևս կարելի է եզրահանգել, որ ընկերության աշխատակիցը կատարել է փորձարկում: Այնուամենայնիվ, վերջում Ընկերության կողմից չեղարկվել է Աճուրդի մասնակցությունը, սակայն ինչ-ինչ համգամանքներով, կամ թույլ տրված տեխնիկական սխալի արդյունքում ընկերությունն ակամայից դարձել է վերը նշված գնման ընթացակարգի մասնակից:

Որպես վերոնշյալի ապացույց առ այն, որ Ընկերության մասնակցությունը Աճուրդին թյուրիմաճություն է, վկայում է նաև այն հանգամանքը, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն հանդիսանալով միայն նշված շաբաթաթերթի թողարկող, իր գործառույթների առումով չէր կարող մասնակցել նշված մրցույթին, որի գնման առարկա է հանդիսանում փայտյա աթոռների ձեռքբերումը: Այս պարագայում դա առնվազն անտրամաբանական է, քանի որ ընկերությունը նույնիսկ այդ ոլորտում չունի մասնագիտական փորձ և գիտելիքներ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 04.10.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն այնուամենայնիվ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, և առաջարկվել է ներկայացնել հրավերով պահանջվող թիվ 1 հավելվածը:

Սակայն, Պատվիրատուն այս դեպքում պետք է ոչ թե առաջարկեր ներկայացնելու թիվ 1 հավելվածը, այլ պետք է մերժեր Ընկերության հայտը, քանի որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն ԱԱՀ վճարող չէ, սակայն գնային առաջարկում նշել է ԱԱՀ-ի գումարը:

Նույն հանձնաժողովի 08.10.2018թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերով նախատեսված թիվ 1 հավելվածը, որի արդյունքում որոշում է կայացվել մերժել Ընկերության հայտը:

Վերոնշյալով պայմանավորված, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.10.2018թ. թիվ 26-3/1261743-18 գրությամբ դիմել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և խնդրել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընթացքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի 23-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները՝ թերթերի և ամսագրերի օտարումը:

Այսպիսով, վերլուծելով վերոգրյալ փաստական հանգամանքները, հանգում ենք այն եզրահանգման, որ Պատվիրատուն պետք է անմիջապես մերժեր Ընկերության հայտը, քանի որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը սխալ է ներկայացված եղել:

Բացի այդ, ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն միտումնավոր չի խախտել Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված որևէ պարտավորություն, քանի որ Ընկերությունը անգամ տեղյակ չի եղել, որ փորձարկման արդյունքում կարող էր դառնար Աճուրդի մասնակից, և մասնակից դառնալու արդյունքում նաև զբաղեցներ 1-ին տեղը, ինչի արդյունքում վերջինիս կառաջարկվեր շտկել որևէ անհամապատասխանություն:

Այս պարագայում Ընկերության կողմից որևէ դիտավորություն, միտում կամ կանխամտածված որևէ գործողություն չի իրականացվել, ինչի արդյունքում կարող էր խախտվել գնման գործընթացի շրջանակներուն որևէ պարտավորություն:

Որպես ապացույց այն մասին, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն իր գործունեության տեսակով չի հանդիսանում կահույք արտադրող կազմակերպություն և ԱԱՀ վճարող, Ձեզ ենք ներկայացնում Ընկերության կանոնադրությունը և ԱԱՀ չվճարելու վերաբերյալ ապացույցները:

Վերոգրյալով պայմանավորված՝ խնդրում ենք Ձեզ, ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.10.2018թ. թիվ 26-3/[1261743]-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 08.10.2018թ. թիվ 18-3/[1260644]-18 գրությունը, «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ««02»

շաբաթաթերթ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 04.10.2018թ. նիստի թիվ 2, և 08.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի 22.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը և կից փաստաթղթերը.

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար գրասենյակային գույքի (փայտյա աթոռ) գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին (այսուհետ՝ նաև Աճուրդ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը՝ որպես Աճուրդի հրավերով նախատեսված թիվ 1 հավելված, կցել է Աճուրդին չվերաբերող սկանավորված փաստաթուղթ (հայտարարություն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/44» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շահերի բախման բացակայության մասին):

Հանձնաժողովը 04.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

- 3-րդ կետով արձանագրել է, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն չի ներկայացրել հավելված 1-ը:

- 4-րդ կետով արձանագրել է, որ նախատեսված հավելված 1-ի համաձայն՝ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 1,200 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

- Նույն կետով որոշել է ծանուցել ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով մեկօրյա ժամկետում շտկել առկա անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հավելված 1-ը՝ հրավերի պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը 08.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթուղթը՝ հավելված 1-ը, և հիմք ընդունելով վերոգրյալը՝ որոշել է մերժել Ընկերության հայտը:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին»

կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջները: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է նույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

• 4.3 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն, որը ներառում է նաև՝

ա) հայտարարություն՝ նույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,

բ) հայտարարություն՝ նույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության մասին,

գ) հայտարարությունսույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

դ) հայտարարությունսույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Նույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում

աճուրդի արդյունքները ամփոփվելուց հետո նույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով հրապարակվում է համակարգում: Եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա նույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում:

զ) հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումըծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

2) գնային առաջարկը ներկայացնում է համակարգի միջոցով:

• 7.9 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում՝ գնահատվում են մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարությունների՝ նույն հրավերի պահանջներին համապատասխանության հանգամանքը:

Դիմում-հայտարարությունների գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե արձանագրվում են անհամապատասխանություններ նույն հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե նույն ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ տեղի ունեցած նիստին Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց նախաձեռնված

ընթացակարգի վերաբերյալ իր առարկությունները: Ըստ վերջինիս, ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի աշխատակիցը՝ www.eauction.armeps.am էլեկտրոնային համակարգը փորձարկելիս որպես գնային առաջարկ ներկայացրել է Աճուրդի նախահաշվային գնից անհամեմատ ցածր՝ սիմվոլիկ գին՝ ամենևին նպատակ չունենալով հանդես գալ որպես աճուրդի մասնակից: Ընդ որում, Ընկերությունը՝ որպես Աճուրդի հրավերով նախատեսված թիվ 1 հավելված կցել է նույն Աճուրդին չվերաբերող սկանավորված փաստաթուղթ, որի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Ընկերության աշխատակցի կողմից կատարվել է փորձարկում: Ավելին, Ընկերության կողմից չեղարկվել է Աճուրդին մասնակցությունը, սակայն թույլ տրված տեխնիկական վրիպակի արդյունքում Ընկերության կողմից կցված փաստաթուղթը այնուամենայնիվ երևացել է համակարգում և Ընկերությունն ակամայից դարձել է վերը նշված Աճուրդի մասնակից: Ընկերության ներկայացուցիչն ընդգծեց նաև այն հանգամանքը, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն հանդիսանում է բացառապես նշված շաբաթաթերթի թողարկող, և իր գործառույթների առումով չէր կարող մասնակցել նշված Աճուրդին, որի գնման առարկա է հանդիսանում փայտյա աթոռների ձեռքբերումը: Բացի այդ, Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովի 04.10.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, քանի որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ն չհանդիսանալով ԱԱՀ վճարող, գնային առաջարկում նշել է ԱԱՀ-ի գումարը, ուստի տվյալ դեպքում պետք Պատվիրատուի կողմից Ընկերության հայտը մերժվեր:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի 23-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները՝ թերթերի և ամսագրերի օտարումը:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձի պահանջով ներկայացրեց ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ հիմնադիր հանդիսացող պետական

կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ ոստիկանության պետի 10.01.2012թ. թիվ 135-Ա հրամանով հաստատված կանոնադրությունը (այսուհետ՝ կանոնադրություն), որի 2.2 կետով սահմանվել են Ընկերության գործունեության հիմնական տեսակները, որոնք են՝ հրատարակչական գործունեություն, գովազդային ծառայություններ, գովազդի զետեղում հեռուստաթերթերում, հեռուստածրագրերի ստեղծում, ռադիոծրագրերի ստեղծում, հեռուստահաղորդումների համար սկզբնադիրների պատրաստում, տեսագրություններ և մոնտաժ, տեսանկարահանում, տեսաֆիլմերի ստեղծում, մշտադիտարկումներ, շնորհանդեսների կազմակերպում, գովազդի և հրատարկչության ոլորտում օրենսդրությամբ չարգելված այլ ծառայություններ:

ՀՀ կառավարության 04.05.20417թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընկերությունը՝ որպես Աճուրդի հրավերով նախատեսված թիվ 1 հավելված, կցել է Աճուրդին չվերաբերող սկանավորված փաստաթուղթ (հայտարարություն՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/44» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շահերի բախման բացակայության մասին):

- ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 1,200 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

- Հանձնաժողովը ծանուցել է ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով մեկօրյա ժամկետում շտկել առկա անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հավելված 1-ը՝

հրավերի պայմաններին համապատասխան, իսկ այնուհետև արձանագրել է, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթուղթը՝ հավելված 1-ը, և հիմք ընդունելով վերոգրյալը՝ մերժել է Ընկերության հայտը:

- Օրենսգրքի 64-րդ հոդվածի հոդվածի 2-րդ մասի 23-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում է թերթերի և ամսագրերի օտարումը:

- Աճուրդով նախատեսված գնման առարկան չի հանդիսանում Ընկերության կանոնադրությամբ սահմանված վերջինիս գործունեության տեսակ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, քանի որ Ընկերությունը չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող, հետևաբար, այն պետք է մերժվեր Հանձնաժողովի կողմից, ինչի արդյունքում ի հայտ չէին գա այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.10.2018թ. թիվ 26-3/[1261743]-18 գրությամբ ««02» շաբաթաթերթ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 01535537/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ